

Հանրային դասախոսությունների շարք՝ ձմռան սեզոնին անցնելու կապակցությամբ

Ձմռան նախաշեմին հրդեհները ավելանում են այն հաստատություններում, որտեղ օգտագործվում են վառարաններ: Իսկ Արագածոտնի մարզին բնորոշ ձնաբքերը հաճախ մարդկային կորուստների պատճառ են դառնում: Բնակչությանը ձմեռային սեզոնին նախապատրաստելու համար Նոյեմբերի 3-ից մարզային փրկարարական վարչության նախաձեռնությամբ անցկացվում են հանրային իրազեկման դասախոսություններ: Ծրագիրն իրականացվում է շուրջ 30 համայնքի դպրոցներում և համայնքապետարաններում: Դասախոսությունների թեմաներն են՝ «Ձնաբքի մեջ հայտնված մարդու վարվելակարգի կանոնները», «Ցրտահարության դեպքում առաջին բուժօգնությունը», «Ձմեռային շրջանի ջեռուցման կազմակերպումը և այրվածքի դեպքում առաջին բուժօգնությունը»: Արդեն դասախոսություններ են կարդացվել Ուջանի և Կոշի միջնակարգ դպրոցներում, որոնց մասնակցել է 25 ուսուցիչ և 110 աշակերտ: